



ՆԱՍՏԱԲԱՆ

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության XV հատորն ընդգրկում է պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի հեքիաթները : Ներկա հատորի համար բնագրեր են ծառայել անվանի ժողովրդագետ Երվանդ Լալայանի 1915-1916 թթ. կազմակերպած բանահյուսական խմբարշավի նյութերը, որոնք անխոնջ տքնանքով գրի են առել անվանի երախտավոր մտավորականներ Երվանդ Պեգազյանը, Արտաշես Բարսեղյանը, Սենեքերիմ Շալճյանը, Եղիշե Վարդանյանը և Հահեն Կուժիկյանը :

Վերոհիշյալ գրառումները կատարված են բարեխղճությամբ, հնարավորին չափ պահպանելով ժողովրդական խոսքի բարբառային, հնչական ու քերականական յուրահատկությունները, ինչպես նաև որոշ տեղեկություններ են հաղորդված ասացողների ու գրառման հանգամանքների վերաբերյալ : Խմբարշավի նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում, որից և օգտվել ենք ներկա հատորը կազմելիս :

Հատորում ընդգրկված 82 հեքիաթները գրի են առնվել 1915 թ. սեպտեմբերից մինչև 1916 թ. փետրվար ամիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանի և Վրաստանի տարբեր շրջաններում հանգրվանած վանեցիներից : Այդ հեքիաթներից 62-ը գրի են առնվել Երևանում, 1-ը՝ Ալեքսանդրապոլում, 17-ը՝ Թիֆլիսում, 2-ի գրառման վայրն անհայտ է :

Հեքիաթաւացները մեծ մասամբ եղել են միջին և բարձր տարիքի վանեցիներ՝ 46-ը տղամարդ է, 34-ը՝ կին, 2-ը՝ անհայտ, որոնք մինչև 1915 թվականի գաղթը բնակվել են Վանում :



Հատորում պահպանված են բնագրային այն սկզբունքները, որոնք մշակված ու հաստատված են «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության համար, հաշվի առնելով նաև այս հատորի նյութերի բնույթն ու առանձնահատկությունները :

1) Ներկա հատորում ընդգրկված են այն հեքիաթները, որոնք իրենց քովանդակությամբ ամբողջական են :

«Հայ ժողովրդական հեքիաթների» նախորդ XIV հատորը նույնպես նվիրված է Վասպուրականին, որի նախաբանում տրված են պատմաաշխարհագրական անհրաժեշտ տեղեկություններ (Շ.Կ):

2) Բնագրերը դասավորված են ըստ տեղի և ասացողների: Նույն հեքիաթասացի նյութերը դասավորված են ըստ բնույթի, նախ՝ հրաշապատում, ապա՝ իրապատում:

3) Պահպանված է բնագրերի ամբողջականությունը: Հի կատարված ոչ մի ուղղում կամ խմբագրում:

4) Բնագրերի մեջ հանդիպող բանահավաքների ընդմիջարկությունները (առանձին դեպքերի ու արտահայտությունների բացատրություն կամ թարգմանություն) դրված են տողատակին «ծանոթություն բանահավաքի» նշումով:

5) Հեքիաթների լեզուն պահպանված է անփոփոխ՝ կիրառելով նոր ուղղագրություն:

Մեր անցյալի երախտավոր բանահավաքները հեքիաթների լեզվի հնչյունական և քերականական առանձնահատկությունների պահպանման հարցում հետևողական չեն եղել. պատահում են երկծև գրություններ կամ բարբառային հնչյունական ու քերականական որոշ շեղումներ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, նույն հեքիաթի մեջ միօրինակ են դարձված որոշ բառերի գրության տարբեր ձևերը՝ հիմք ընդունելով բարբառին բնորոշը:

6) Հեքիաթների բովանդակությունը ճիշտ ընկալելու, ինչպես նաև բանավոր խոսքի նրբերանգները հաղորդելու նպատակով ճշգրտված է կետադրությունը, վերաբաժանված՝ բնագրերի պարբերությունները, երկխոսությունները, որոշակի է դարձված ուղղակի և անուղղակի խոսքի կիրառումը: Ուղղակի խոսքի մեջ, եթե կա նաև ուրիշի ուղղակի խոսք, վերջինս վերցված է չակերտների մեջ: Հստակ են դարձված առձգանության և տրոհման նշանները: Մեծատառով են տրված հերոսների մականունները, երևակայական երկրների և կենդանիների անունները:

7) Ուղղված են բնագրերում եղած բացահայտ սխալներն ու վրիպումները: Վանի բարբառում հանդիպող «ք» քմայնացումը տառադարձած է «քյ» ձևով, օրինակ՝ քյաղաք:

Հատորը բացի բնագրերից ունի.

Ծանոթագրություններ, որտեղ հերթականությամբ լուսաբանվում է հատորում տեղ գտած բոլոր հեքիաթների գրառման պատմությունը:

Բառարան, որն ընդգրկում է հատորում տեղ գտած բարբառային, դժվար հասկանալի ու փոխառյալ բառերի բացատրությունները:

Ցանկեր, որոնք այբբենական կարգով ներկայացնում են հեքիաթները, ինչպես նաև հատորում ընդգրկված հեքիաթների ծագման վայրի, բանասացի ու բանահավաքի մասին տեղեկություններ:

Հատորում հանդիպող համառոտագրություններն են՝

ԲԱ - ԳՂԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ:

ԾԱ - Ծանոթություն ասացողի:

ԾԲ - Ծանոթություն բանահավաքի:

ԾԿ - Ծանոթություն կազմողի: